



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ
ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

14 ՄԱՐՏԻ 2024 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2-ՐԴ
ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 26 անդամներ:

Բացակա էին՝ Արտակ Աշիկյանը, Նարեկ Բաղդասարյանը, Անդրանիկ
Կիրակոսյանը, Արաքսյա Համբարձումյանը, Սուրբատ Հովսեփյանը, Կարեն
Ղազարյանը, Արտյոմ Պետրոսյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Հրայր Հակոբջանյան, Սուրեն Մկրտչյան, Հրաչյա Հովհաննիսյան, Խորեն
Ուստյան, Մհեր Գևորգյան, Արգամ Հովակիմյան, Գոհար Հովսեփյան, Մերի
Մելիքյան, Արսեն Եփրեմյան, Ռուբեն Ավետիսյան, Կարեն Պողոսյան, Նարեկ
Գալստյան, Արարատ Գուլեցյան, Գարեգին Հարությունյան, Ատոմ Թադևոսյան,
Վահագն Թարվերդյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Կառլեն Մկրտչյանը

**Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար /1.1-1/ Գոռ
Ղազարյանը**

Լսեցին

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 14-Ի ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ
մասով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Արտաշատ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի 2024 թվականի
մարտի 14-ի երկրորդ (հերթական) նիստի օրակարգը՝

1.1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԵՐԱՔԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ/

1.2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԵՐԻ ՄԵԼԻՔՅԱՆ/

1.3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐԿԱՐԻ 9-Ի N 9-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԵՐԻ ՄԵԼԻՔՅԱՆ/

1.4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 251-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԵՐԻ ՄԵԼԻՔՅԱՆ/

1.5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂՔԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԿՃԱՐՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԿՃԱՐԿՈՂ ԿԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ (ՄԻՋՆՈՐԴԱԿՃԱՐԸ) ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈՒԲԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

1.6. «ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ՌԱԶՄԻԿ ԳՈԼԵՑՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԸՄՔՉԱՄԱՐՏԻ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՀԵՐԹԱՓՈԽԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԱՅԼ ԿԱՅՐ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՐԱՏ ԳՈԼԵՑՅԱՆ/

1.7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 06-Ի N 227-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ/

1.8. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ/

1.9. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՆԳՅԱՆ (HONGYAN) ՄԱԿՆԻՇԻ ԲԵՌՆԱՏԱՐԸ «ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐԵԿԱՐԳ ԱՐՏԱՇԱՏ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԺԱՄԿԵՏ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ/

1.10. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՈՒԱՐ (ՍԱԶ) ՄԱԿՆԻՇԻ ԿԻՍԱԲԵՌՆԱՏԱՐԸ «ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐԵԿԱՐԳ ԱՐՏԱՇԱՏ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԺԱՄԿԵՏ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ/

1.11. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՄԱՐ ԿՈ (MAZ KO-806-20) ՄԱԿՆԻՇԻ ՀԱՏՈՒԿ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՄԵՔԵՆԱՆ «ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ-ԿՈՄՊՈՒՆԱԼ ՄՊԱՍԱՐԿՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԺԱՄԿԵՏ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ/

1.12. «ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏԻ ԱՎԱԶԱԿՈՊԾԱՅԻՆ ԽԱՌՆՈՒՐԴԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ 1-ԻՆ ՏԵՂԱՄԱՍԻ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

/Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ/

1.13. «ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԱՎԱԶԱԿՈՊԾԱՅԻՆ ԽԱՌՆՈՒՐԴԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ 2-ՐԴ ՏԵՂԱՄԱՍԻ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

/Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ/

1.14. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՏԱԶԱՏ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ 0,33 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ/

1.15. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՏԱԶԱՏ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ 0,28 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ/

1.16. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱՔՍԱՎԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 9,42370 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ/

1.17. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N 51-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

1.27. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ԳՅՈՒՂԻ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՓՈՂՈՑ 32 ՀԱՅՅԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

1.28. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ԳՅՈՒՂԻ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՓՈՂՈՑ 34 ՀԱՅՅԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

1.29. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ԳՅՈՒՂԻ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՓՈՂՈՑ 36 ՀԱՅՅԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

1.30. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ԳՅՈՒՂԻ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՓՈՂՈՑ 38 ՀԱՅՅԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

1.31. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ ՓՈՂՈՑ 16/1 ՀԱՅՅԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

1.32. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ՕԳՈՍՏՈՍԻ 23-Ի ՓՈՂՈՑ 79/10 ՀԱՅՅԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

1.33. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԱԼԱՐ ԳՅՈՒՂԻ ԿՈՄԻՏԱՍԻ ՓՈՂՈՑ 32/1 ՀԱՅՅԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱԿԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՅԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

1.34. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ 20 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԿՐՊԱԿ ԵՎ (ԿԱՍ)

ՏԱՂԱԿԱՐ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՅՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

1.35. ՔԱՐՏԵԶԱԳՐՄԱՆ ՍԽԱԼԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՅԱԾ՝ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՒՔՅԵԿՏԻ ՍԽԱԼՆ ՈՒՂՂԵԼՈՒ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

1.36. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ Ա.ԽԱՀԱՏԱՏՐՅԱՆ 116/1 ՀԱՍՅԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՈՒՄԻՑ ՍՏԱՅՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՊԻՏԱԼ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

1.37. ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԽՉՅԱՆ ԳՅՈՒՂԻ ՄԽՉՅԱՆ-ՀՈՎՏԱՇԵՆ ԽՃՈՒՂԻ 3 ՀԱՍՅԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ (ՀՈՂԱՄԱՍԻ) ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

1.38. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ/

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 61-Ա /

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-ին կետով, 82.1-ին հոդվածի 6-րդ մասով՝ Արտաշատ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Արտաշատ համայնքի 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 62-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ՄԵՐԻ ՄԵԼԻՔՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ի կետով, 83-րդ հոդվածի 2-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի 2023 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն NN 1-5 հավելվածների և հավելվածներով ներկայացված ցուցանիշների ամփոփ վերլուծությունը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 63-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի N 9-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ՄԵՐԻ ՄԵԼԻՔՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հաշվեքննիչ պալատի կողմից «Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարանի ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ իրականացված հաշվեքննության արդյունքների վերաբերյալ» ընթացիկ եզրակացությունը՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 9-ի N 9-Ա որոշման մեջ կատարված

փոփոխությունները և լրացումները համաձայն սույն որոշման NN 1-5 հավելվածների և հավելվածներով ներկայացված ցուցանիշների ամփոփ վերլուծությունը:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 64-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 251-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ՄԵՐԻ ՄԵԼԻՔՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի 2024 թվականի բյուջեի համայնքի ղեկավարի առաջարկած հետևյալ փոփոխությունները.

1)08.01.01.51 գործառական դասակարգման /սպորտային միջոցառումներ/ 4239 հոդվածը պակասեցնել 5 000 000 ՀՀ դրամով.

2)08.01.01.51 գործառական դասակարգման /սպորտային միջոցառումներ/ 4269 հոդվածն ավելացնել 5 000 000 ՀՀ դրամով.

3)08.02.03.51 գործառական դասակարգման/մշակութային միջոցառումների հիմնանորոգում/4251 հոդվածը պակասեցնել 26 200 000 ՀՀ դրամով.

4)08.02.01.51 գործառական դասակարգման /գրադարանային ծառայություններ/ <<Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի գրադարանային համակարգ>> ՀՈԱԿ-ի 4511 հոդվածն ավելացնել 26 200 000 ՀՀ դրամով.

5)05.01.01.51 գործառական դասակարգման/աղբահանություն, սանիտարական մաքրում/5129 հոդվածը պակասեցնել 13 060 000 ՀՀ դրամով.

6)04.02.04.51 գործառական դասակարգման/ոռոգման ցանցի կառուցում/ 5134 հոդվածն ավելացնել 8 160 000 ՀՀ դրամով.

7)04.03.02.55 գործառական դասակարգման/նավթամթերք և բնական գազ/ 5134 հոդվածն ավելացնել 4 900 000 ՀՀ դրամով.

2. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի „Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին“, N 251-Ն որոշման 2-րդ և 3-րդ հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման 1-ին և 2-րդ հավելվածների:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 65-Ն/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՎՈՂ
ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ (ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐԸ) ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

/Ձեկ. ՌՈՒԲԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, ելնելով աղբահանության վճար վճարող բնակիչների շահերից՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Տալ համաձայնություն «ՀայՓոստ» ՓԲԸ-ի մասնաճյուղերում Արտաշատ համայնքի բյուջե գանձվող աղբահանության վճարների հավաքագրման համար վճարվող 3%-ի չափով վարձատրությունը (միջնորդավճարը) համայնքի բյուջեից կատարելուն:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 66-Ա/

Լսեցին

**<<ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ՌԱԶՄԻԿ ԳՈԼԵՑՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԸՄԲՇԱՄԱՐՏԻ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՀԵՐԹԱՓՈԽԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ
ՄԱՐԶԱԴՊՐՈՑ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԱՅԼ ՎԱՅՐ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Ձեկ. ԱՐԱՐԱՏ ԳՈԼԵՑՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասով, հաշվի առնելով «Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի Ռազմիկ Գոլեցյանի անվան ըմբշամարտի օլիմպիական հերթափոխի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի վարչական շենքում նախատեսված շինարարական աշխատանքները, մարզումների բնականոն իրականացումն ապահովելու նպատակով՝ համայնքի ավագանին **որոշում է**.

1.«Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի Ռազմիկ Գոլեցյանի անվան ըմբշամարտի օլիմպիական հերթափոխի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի աշխատանքներն ու մարզումները, մինչև շինարարական աշխատանքների ավարտը, ժամանավորապես տեղափոխել և իրականացնել «Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի գեղագիտական կենտրոն» ՀՈԱԿ-ին պատկանող մարզադահլիճում և անձնակազմի համար հարմարեցված տարածքներում:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 67-Լ/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 06-Ի N 227-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ համայնքի ավագանին **որոշում է**.

1.«Արարատի մարզի Արտաշատ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 06-ի N 227-Լ որոշման N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 68-Լ/

Լսեցին

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ համայնքի ավագանին **որոշում է**.

1. Հաստատել Արտաշատ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 06-ի՝ «Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի 2023 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին» N 233-Լ որոշմամբ հաստատված գույքացուցակի (այսուհետ՝ գույքացուցակ) 11-րդ հավելվածում՝ 19-րդ, 20-րդ և 21-րդ տողերի համապատասխան ավելացմամբ կատարված փոփոխությունը՝ ՄԱՁ ԿՈ (MAZ KO 806-20) մակնիշի հատուկ համակցված, ՈՒԱՁ (UAZ 236324) մակնիշի կիսաբեռնատար և ՀՈՆԳՅԱՆ (HONGYAN 6X4, CQ3346HV35) մակնիշի բեռնատար տրանսպորտային միջոցների ձեռքբերմամբ պայմանավորված՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

2. Հաստատել գույքացուցակի 3.37-րդ հավելվածում՝ 17-րդ տողի համապատասխան փոփոխությունը՝ ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Քաղցրաշեն գյուղի Գ.Նարեկացու փողոցի թիվ 28 հասցեում գտնվող 0.10605 հա մակերեսով 03-097-0197-0004 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի օտարմամբ պայմանավորված՝ համաձայն հավելված 2-ի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 69-Լ/

Լսեցին

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՆԳՅԱՆ (HONGYAN) ՄԱԿՆԻՇԻ ԲԵՌՆԱՏԱՐԸ «ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐԵԿԱՐԳ ԱՐՏԱՇԱՏ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԺԱՄԿԵՏ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, 102-րդ հոդվածով և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով՝ համայնքի ավագանին **որոշում է**.

1. Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող Հոնգյան (Hongyan 6x4) մակնիշի բեռնատարը անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Արտաշատ համայնքի Բարեկարգ Արտաշատ» ՀՈԱԿ-ին՝ Արտաշատ համայնքում իր իրավասությունների շրջանակներում նշված տրանսպորտային միջոցով ծառայություններ մատուցելու նպատակով:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 70-Լ/

Լսեցին

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՈՒԱՁ (ՍԱԶ) ՄԱԿՆԻՇԻ ԿԻՍԱԲԵՌՆԱՏԱՐԸ «ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐԵԿԱՐԳ ԱՐՏԱՇԱՏ»; ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԺԱՄԿԵՏ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, 102-րդ հոդվածով և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող ՈՒԱՁ (ՍԱԶ 236324) մակնիշի կիսաբեռնատարը անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Արտաշատ համայնքի Բարեկարգ Արտաշատ» ՀՈԱԿ-ին՝ Արտաշատ համայնքում իր իրավասությունների շրջանակներում նշված տրանսպորտային միջոցով ծառայություններ մատուցելու նպատակով:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 71-Լ/

Լսեցին

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՁ ԿՈ (ՄԱԶ ՔՕ-806-20) ՄԱԿՆԻՇԻ ՀԱՏՈՒԿ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՄԵՔԵՆԱՆ «ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ-ԿՈՄՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ»; ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԺԱՄԿԵՏ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, 102-րդ հոդվածով և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող ՄԱԶ ԿՈ (MAZ KO-806-20) մականիշի հատուկ համակցված մեքենան անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Արտաշատ համայնքի Արտաշատ-Կոմունալ սպասարկում» ՀՈԱԿ-ին՝ Արտաշատ համայնքում իր իրավասությունների շրջանակներում նշված տրանսպորտային միջոցով ծառայություններ մատուցելու նպատակով:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 72-Լ/

Լսեցին

«ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏԻ ԱՎԱԶԱԿՈՊԾԱՅԻՆ ԽԱՌՆՈՒՐԴԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ 1-ԻՆ ՏԵՂԱՄԱՍԻ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

/Ձեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման N 1 հավելվածի 28-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տրամադրել համաձայնություն «ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Արարատի մարզի Արտաշատի ավագակոպճային խառնուրդի հանքավայրի 1-ին տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների իրականացմանը:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 73-Ա/

Լսեցին

«ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԱՎԱԶԱԿՈՊԾԱՅԻՆ ԽԱՌՆՈՒՐԴԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ 2-ՐԴ ՏԵՂԱՄԱՍԻ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

/Ձեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման N 1 հավելվածի 28-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Տրամադրել համաձայնություն «ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Արարատի մարզի Շահումյանի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի 2-րդ տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների իրականացմանը:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 74-Ա/

Լսեցին

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՏԱԶԱՏ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏԵԿՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,33 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԼՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Արտաշատ համայնքի Գետազատ գյուղում գտնվող, Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող 03-029-0118-0073 կադաստրային ծածկագրով 0,33 հա գյուղատնտեսական նշանակության հողամասը (4-րդ կարգ, ջրովի վարելահող) օտարել աճուրդային եղանակով:

2. Օտարվող հողամասի մեկնարկային գինը սահմանել 450000 (չորս հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

3. Աճուրդն անցկացնել բաց դասական եղանակով:

4. Օտարման գործընթացը կազմակերպել մեկ տարվա ընթացքում:

5. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 75-Ա/

Լսեցին

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՏԱԶԱՏ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ 0,28 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Արտաշատ համայնքի Գետազատ գյուղում գտնվող, Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող 03-029-0118-0071 կադաստրային ծածկագրով 0,28 հա գյուղատնտեսական նշանակության հողամասը (4-րդ կարգ, ջրովի վարելահող) օտարել աճուրդային եղանակով:
2. Օտարվող հողամասի մեկնարկային գինը սահմանել 400000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ:
3. Աճուրդն անցկացնել բաց դասական եղանակով:
4. Օտարման գործընթացը կազմակերպել մեկ տարվա ընթացքում:
5. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 76-Ա/

Լսեցին

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱՔՍԱԿԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 9,42370 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Արտաշատ համայնքի Արաքսավան գյուղում գտնվող, Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող, 03-016-0146-0022 կադաստրային ծածկագրով 9,42370 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության (5-րդ կարգի ջրովի վարելահող) հողամասը մրցութային եղանակով, վարձակալության իրավունքով տրամադրել օգտագործման:

2. Վճարի մեկնարկային չափ սահմանել տարեկան 150000 (հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:
3. Հողամասի վարձակալության ժամկետը սահմանել 25 (քսանհինգ) տարի:
4. Մրցույթի գործընթացը կազմակերպել մեկ տարվա ընթացքում:
5. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 77-Ա/

Լսեցին

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N 51-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Արտաշատ համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 15-ի N 51-Ա որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի վարչական տարածքում գտնվող, Գայանե Լյովայի Խաչատրյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող 0,5 հա մակերեսով, 03-001-0425-0022 կադաստրային ծածկագրով, գյուղատնտեսական նշանակության հողատեսքը՝ կորիզավոր, հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի, իսկ գործառնական նշանակությունը փոփոխել արդյունաբերական օբյեկտների՝ ալկոհոլային խմիչքների թորման, բազմաթորման և խառնման արտադրամաս և պարիսպ կառուցելու նպատակով:»

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 78-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ԳՅՈՒՂԻ ՄՈՒՐԱՑԱՆԻ ՓՈՂՈՑ 29 ՀԱՍՑԵՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով և «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Աճուրդային եղանակով օտարել ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող Արտաշատ համայնքի Բուրաստան գյուղի Մուրացանի փողոց 29 հասցեում գտնվող հողամասը՝

լոտ 1-ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Բուրաստան գյուղի Մուրացանի փողոց 29 հասցեում գտնվող, 03-027-0201-0026 կադաստրային ծածկագրով 0,08983 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամաս:

2. Հողամասի օտարման մեկնարկային գին սահմանել՝ 1 800 000 /մեկ միլիոն ութ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

3. Օտարումը կազմակերպել մեկ տարվա ընթացքում:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 79-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ԳՅՈՒՂԻ ՄՈՒՐԱՑԱՆԻ ՓՈՂՈՑ 31 ՀԱՍՅԵՌԻՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով և «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Աճուրդային եղանակով օտարել ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող Արտաշատ համայնքի Բուրաստան գյուղի, Մուրացանի փողոց 31 հասցեում գտնվող հողամասը՝

լոտ 1-ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Բուրաստան գյուղի, Մուրացանի փողոց 31 հասցեում գտնվող, 03-027-0201-0025 կադաստրային ծածկագրով 0,1հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամաս:

2.Հողամասի օտարման մեկնարկային գին սահմանել՝ 2 000 000 /երկու միլիոն/ ՀՀ դրամ:

3.Օտարումը կազմակերպել մեկ տարվա ընթացքում:

4.Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 80-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ԳՅՈՒՂԻ ՄՈՒՐԱՑԱՆԻ ՓՈՂՈՑ 33 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏԵՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով և «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Աճուրդային եղանակով օտարել ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող Արտաշատ համայնքի Բուրաստան գյուղի, Մուրացանի փողոց 33 հասցեում գտնվող հողամասը՝

լոտ 1-ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Բուրաստան գյուղի, Մուրացանի փողոց 33 հասցեում գտնվող, 03-027-0201-0024 կադաստրային ծածկագրով 0,1հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամաս:

2.Հողամասի օտարման մեկնարկային գին սահմանել՝ 2 000 000 /երկու միլիոն/ ՀՀ դրամ:

3.Օտարումը կազմակերպել մեկ տարվա ընթացքում:

4.Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 81-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ԳՅՈՒՂԻ ՄՈՒՐԱՑԱՆԻ ՓՈՂՈՑ 35 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏԵՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով և «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Աճուրդային եղանակով օտարել ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող Արտաշատ համայնքի Բուրաստան գյուղի, Մուրացանի փողոց 35 հասցեում գտնվող՝ հողամասը՝

լոտ 1-ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Բուրաստան գյուղի, Մուրացանի փողոց 35 հասցեում գտնվող, 03-027-0201-0023 կադաստրային ծածկագրով 0,1հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամաս:

2. Հողամասի օտարման մեկնարկային գին սահմանել՝ 2 000 000 /երկու միլիոն/ ՀՀ դրամ:

3. Օտարումը կազմակերպել մեկ տարվա ընթացքում:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 82-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ԳՅՈՒՂԻ ՄՈՒՐԱՑԱՆԻ ՓՈՂՈՑ 37 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏԵՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով և «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Աճուրդային եղանակով օտարել ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող Արտաշատ համայնքի Բուրաստան գյուղի, Մուրացանի փողոց 37 հասցեում գտնվող հողամասը՝

լրտ 1-ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Բուրաստան գյուղի, Մուրացանի փողոց 37 հասցեում գտնվող, 03-027-0201-0022 կադաստրային ծածկագրով 0,1հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամաս:

2. Հողամասի օտարման մեկնարկային գին սահմանել՝ 2 000 000 /երկու միլիոն/ ՀՀ դրամ:

3. Օտարումը կազմակերպել մեկ տարվա ընթացքում:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 83-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ԳՅՈՒՂԻ ՄՈՒՐԱՑԱՆԻ ՓՈՂՈՑ 39 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏԵՎՈՂ ՀՈՂԱՄԱՍ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով և «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Աճուրդային եղանակով օտարել ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող Արտաշատ համայնքի Բուրաստան գյուղի, Մուրացանի փողոց 39 հասցեում գտնվող հողամասը՝

լրտ 1-ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Բուրաստան գյուղի, Մուրացանի փողոց 39 հասցեում գտնվող, 03-027-0201-0021 կադաստրային ծածկագրով 0,1հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամաս:

2. Հողամասի օտարման մեկնարկային գին սահմանել՝ 2 000 000 /երկու միլիոն/ ՀՀ դրամ:

3. Օտարումը կազմակերպել մեկ տարվա ընթացքում:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 84-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ԳՅՈՒՂԻ ՄՈՒՐԱՑԱՆԻ ՓՈՂՈՑ 41 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով և «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Աճուրդային եղանակով օտարել ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող Արտաշատ համայնքի Բուրաստան գյուղի, Մուրացանի փողոց 41 հասցեում գտնվող հողամասը՝

լոտ 1-ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Բուրաստան գյուղի, Մուրացանի փողոց 41 հասցեում գտնվող, 03-027-0201-0020 կադաստրային ծածկագրով 0,16697հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամաս:

2. Հողամասի օտարման մեկնարկային գին սահմանել՝ 3 200 000 /երեք միլիոն երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ:

3. Օտարումը կազմակերպել մեկ տարվա ընթացքում:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 85-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ԳՅՈՒՂԻ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՓՈՂՈՑ 28 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի

21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով և «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Աճուրդային եղանակով օտարել ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող Արտաշատ համայնքի Բուրաստան գյուղի, Ա. Խաչատրյան փողոց 28 հասցեում գտնվող հողամասը՝

լրտ 1-ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Բուրաստան գյուղի, Ա. Խաչատրյան փողոց 28 հասցեում գտնվող, 03-027-0201-0014 կադաստրային ծածկագրով 0,09989հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամաս:

2. Հողամասի օտարման մեկնարկային գին սահմանել՝ 2 000 000 /երկու միլիոն/ ՀՀ դրամ:

3. Օտարումը կազմակերպել մեկ տարվա ընթացքում:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 86-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ԳՅՈՒՂԻ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՓՈՂՈՑ 30 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով և «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Աճուրդային եղանակով օտարել ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող Արտաշատ համայնքի Բուրաստան գյուղի Ա. Խաչատրյան փողոց 30 հասցեում գտնվող հողամասը՝

լրտ 1-ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Բուրաստան գյուղի Ա. Խաչատրյան փողոց 30 հասցեում գտնվող, 03-027-0201-0015 կադաստրային ծածկագրով 0,09992հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամաս:

2. Հողամասի օտարման մեկնարկային գին սահմանել՝ 2 000 000 /երկու միլիոն/ ՀՀ դրամ:

3. Օտարումը կազմակերպել մեկ տարվա ընթացքում:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 87-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ԳՅՈՒՂԻ Ա. ԽԱՋԱՏՐՅԱՆ ՓՈՂՈՑ 32 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով և «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Աճուրդային եղանակով օտարել ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող Արտաշատ համայնքի Բուրաստան գյուղի, Ա. Խաջատրյան փողոց 32 հասցեում գտնվող հողամասը՝

լրտ 1-ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Բուրաստան գյուղի, Ա. Խաջատրյան փողոց 32 հասցեում գտնվող, 03-027-0201-0016 կադաստրային ծածկագրով 0,09996 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամաս:

2. Հողամասի օտարման մեկնարկային գին սահմանել՝ 2 000 000 /երկու միլիոն/ ՀՀ դրամ:

3. Օտարումը կազմակերպել մեկ տարվա ընթացքում:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 88-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ԳՅՈՒՂԻ

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՓՈՂՈՑ 34 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով և «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Աճուրդային եղանակով օտարել ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող Արտաշատ համայնքի Բուրաստան գյուղի Ա. Խաչատրյան փողոց 34 հասցեում գտնվող հողամասը՝

լոտ 1-ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Բուրաստան գյուղի Ա. Խաչատրյան փողոց 34 հասցեում գտնվող, 03-027-0201-0017 կադաստրային ծածկագրով 0,09998 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամաս:

2. Հողամասի օտարման մեկնարկային գին սահմանել՝ 2 000 000 /երկու միլիոն/ ՀՀ դրամ:

3. Օտարումը կազմակերպել մեկ տարվա ընթացքում:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 89-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ԳՅՈՒՂԻ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՓՈՂՈՑ 36 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով և «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Աճուրդային եղանակով օտարել ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող Արտաշատ համայնքի Բուրաստան գյուղի Ա. Խաչատրյան փողոց 36 հասցեում գտնվող հողամասը՝

լրտ 1-ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Բուրաստան գյուղի Ա. Խաչատրյան փողոց 36 հասցեում գտնվող, 03-027-0201-0018 կադաստրային ծածկագրով 0,09997 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամաս:

2.Հողամասի օտարման մեկնարկային գին սահմանել՝ 2 000 000 /երկու միլիոն/ ՀՀ դրամ:

3.Օտարումը կազմակերպել մեկ տարվա ընթացքում:

4.Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 90-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ԳՅՈՒՂԻ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՓՈՂՈՑ 36 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏԵՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով և «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Աճուրդային եղանակով օտարել ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող Արտաշատ համայնքի Բուրաստան գյուղի Ա. Խաչատրյան փողոց 38 հասցեում գտնվող հողամասը՝

լրտ 1-ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Բուրաստան գյուղի Ա. Խաչատրյան փողոց 38 հասցեում գտնվող, 03-027-0201-0019 կադաստրային ծածկագրով 0,1253հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամաս:

2.Հողամասի օտարման մեկնարկային գին սահմանել՝ 2 500 000 /երկու միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

3.Օտարումը կազմակերպել մեկ տարվա ընթացքում:

4.Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 91-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ ՓՈՂՈՑ 16/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով և «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Աճուրդային եղանակով օտարել ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի Հ. Թովմասյան փողոց 16/1 հասցեում գտնվող՝ հողամասը՝

լոտ 1-ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի Հ. Թովմասյան փողոց 16/1 հասցեում գտնվող, 03-001-0127-0035 կադաստրային ծածկագրով 0,105 հա մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամաս:

2. Հողամասի օտարման մեկնարկային գին սահմանել՝ 7 500 000 /յոթ միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

3. Օտարումը կազմակերպել մեկ տարվա ընթացքում:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 92-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ՕԳՈՍՏՈՍԻ 23-Ի ՓՈՂՈՑ 79/10 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի

21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով և «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով՝ համայնքի ավագանին **որոշում է**.

1. Աճուրդային եղանակով օտարել ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի, Օգոստոսի 23-ի փողոց 79/10 հասցեում գտնվող հողամասը՝

լրտ 1-ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի, Օգոստոսի 23-ի փողոց 79/10 հասցեում գտնվող, 03-001-0179-0074 կադաստրային ծածկագրով 0,0038 հա մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամաս:

2. Հողամասի օտարման մեկնարկային գին սահմանել՝ 300 000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ:

3. Օտարումը կազմակերպել մեկ տարվա ընթացքում:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 93-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԱԼԱՐ ԳՅՈՒՂԻ ԿՈՄԻՏԱՍԻ ՓՈՂՈՑ 32/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետի պահանջներով և ուսումնասիրելով Ա. Հակոբյանի 06/03/2024 թվականի թիվ Բ-3770 դիմումը՝ համայնքի ավագանին **որոշում է**.

1. Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող, Արտաշատ համայնքի Դալար գյուղի Կոմիտասի փողոց 32/1 հասցեում գտնվող, 03-032-0026-0038 կադաստրային ծածկագրով 0,02160 հա մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքի կարգով, հողամասը ընդլայնելու նպատակով օտարել Արտաշատ համայնքի, Դալար գյուղի Կոմիտասի փողոց 59 հասցեում գտնվող 0,21379 հա մակերեսով 03-032-0026-0081 կադաստրային ծածկագրով բնակավայրերի

հասարակական կառուցապատման հողամասի սեփականատեր՝ Արմեն Համլետի Հակոբյանին /ծնված 04/11/1986 թվականին/:

2. Հողամասի օտարման գինը սահմանել 400 000 /չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ:

3. Օտարման գործընթացը կազմակերպել 2024 թվականի ընթացքում:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 94-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ 20 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԿՐՊԱԿ ԵՎ (ԿԱՄ) ՏԱՂԱՎԱՐ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 184-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 102-րդ հոդվածով, ՀՀ հողային օրենսգրքի 48¹-րդ հոդվածի 8-րդ մասով, 76-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 204¹-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ N 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2-րդ կետի «ա» ենթակետը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. ՀՀ Արարատի մարզի Արտաշատի քաղաքապետի համապատասխան որոշումների համաձայն, մինչև 20 քառակուսի մետր մակերեսով կրպակ և (կամ) տաղավար տեղադրելու համար հատկացված, Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի յուրաքանչյուր 1 քառակուսի մետրի տարեկան վարձավճարը սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքի 100 տոկոսի չափով:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 95-Ա/

Լսեցին

ՔԱՐՏԵՉԱԳՐՄԱՆ ՍԽԱԼԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ՝ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏԻ ՍԽԱԼՆ ՈՒՂԴԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի՝ «Կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման կարգը սահմանելու մասին» N 698-Ն որոշման 39-րդ կետի 1-ին ենթակետը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Քարտեզագրման սխալի հետևանքով որպես քաղաքացիների սեփականություն փոխանցված՝ Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքում գտնվող 03-001-0173-0043 կադաստրային ծածկագրով 0,0165հա մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասի սեփականության սուբյեկտի սխալն ուղղել որպես Արտաշատ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասի:

2. Կատարել համապատասխան փոփոխություն համայնքի հողային հաշվեկշռում:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 96-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ Ա.ԽԱՀԱՏՐՅԱՆ 116/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՈՒՄԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՊԻՏԱԼ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 4-ի 1098-Ն որոշմամբ, Արարատի մարզի Արտաշատ համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 11-ի 100-Ա որոշումը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պետական գույքի կառավարման կոմիտեի գլխավոր քարտուղարի 2024 թվականի փետրվարի 23-ի N04/13.4/1218-2024 գրությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի Ա.Խաչատրյան 116/1 հասցեում գտնվող անշարժ գույքի օտարումից ստացված ֆինանսական միջոցների օգտագործման նպատակով Արտաշատ համայնքի Նորաշեն գյուղական բնակավայրի մանկապարտեզի վերանորոգման կամ Արտաշատ

համայնքի Արաքսավան գյուղական բնակավայրի մանկապարտեզի վերանորոգման կապիտալ շինարարական ծրագրերը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 97-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԽՉՅԱՆ ԳՅՈՒՂԻ ՄԽՉՅԱՆ-ՀՈՎՏԱՇԵՆ ԽՃՈՒՂԻ 3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ (ՀՈՂԱՄԱՍԻ) ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 184-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 81-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերով, 102-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով 12.09.2019 թվականին Մխչյան համայնքի ղեկավարի և Սարգիս Արայիկի Ներսիսյանի (ներկայումս՝ Միրոյան) միջև կնքված անշարժ գույքի մրցույթով վարձակալության պայմանագրի (գրանցամատյանում գրանցված 3243) 6.2-րդ կետը, հաշվի առնելով Սարգիս Միրոյանի դիմումը (դիմում՝ 07.03.2024թ., թիվ Բ-3841)՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ քաղաքում երկու հազար տասնինը թվականի սեպտեմբերի տասներկուսին ՀՀ «ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ» նոտարական տարածքի նոտար՝ ՌՈՒԶԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ կողմից վավերացված անշարժ գույքի մրցույթով վարձակալության պայմանագրում (գրանցամատյան-3243) անշարժ գույքի հասցեի, հողամասի մակերեսի, կադաստրային ծածկագրի, նպատակային և գործառնական նշանակության, օգտագործման նպատակի և վարձավճարի փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

2.Վարձավճարի չափ սահմանել 1.500.000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ

3.Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 98-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ

**ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Ձեկ. ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի երրորդ (հերթական) նիստի գումարման օրը և ժամը սահմանել 2024 թվականի ապրիլի 10-ին, ժամը 11:00-ին:

2. Նիստը կազմակերպել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարանի ավագանու նիստերի դահլիճում, հասցեն ք. Արտաշատ, Օգոստոսի 23-ի փողոց, թիվ 62:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 99-Ա/

Ավագանու անդամներ

ԱՆԻ ԱԶԱՏՅԱՆ

ՀԵՐՄՈՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՄԱՐԻԱՄ ԲԱԲԱՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ

ԱՄԱԼՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՌՈՔԵՐՏ ԴԵՐՄՈՅԱՆ


ԱՐՄԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ԽԱԶԱՏՐՅԱՆ

ԱԼԲԵՐՏ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ԳՈՒՎՐ ՀԱԿՈԲՅԱՆ

ԳԱՐԻԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ



ՀՈՎԻԿ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

[Handwritten signature]

ԱՐՄԵՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

[Handwritten signature]

ԱՐՏԱՎԱՋԴ ՄԱՐԳԱՐՅԱՆ

[Handwritten signature]

ՄԱՐՈ ՄԱՐԳԱՐՅԱՆ

[Handwritten signature]

ԱՐԹՈՒՐ ՄԿՐՏՉՅԱՆ

[Handwritten signature]

ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

[Handwritten signature]

ՄԱՐԻԱՄ ՆԻԿՈԼՅԱՆ

[Handwritten signature]

ՀԱՄԼԵՏ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

[Handwritten signature]

ՍՈՖԻԱ ՈՍԿԱՆՅԱՆ

[Handwritten signature]

ԻՇԽԱՆ ՍԱՀԱԿՅԱՆ

[Large handwritten signature]

ՍՅՈՒԶԱՆՆԱ ՍԱՅԱԴՅԱՆ

[Handwritten signature]

ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ

[Handwritten signature]

ԱՐՄԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

[Handwritten signature]

ՍԵՂՐԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

[Handwritten signature]

ՆԱՐԻՆԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

[Handwritten signature]

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱԿԱՐ

ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

[Handwritten signature]



Նիստին արձանագրեց՝ Գոռ Նազարյանը

[Handwritten signature]



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք. Արտաշատ, (0235) 20915 artashatmeria@artashat.am; artashatmeria@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՄԱՐՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ N 61-Ա

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ համայնքի ավագանին **որոշում է**.

1. Հաստատել Արտաշատ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի 2024 թվականի մարտի 14-ի երկրորդ (հերթական) նիստի **օրակարգը՝**

1.1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ/

1.2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԵՐԻ ՄԵԼԻՔՅԱՆ/

1.3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի N 9-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԵՐԻ ՄԵԼԻՔՅԱՆ/

1.4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 251-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԵՐԻ ՄԵԼԻՔՅԱՆ/

1.5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՎՈՂ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ (ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐԸ) ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈՒԲԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

1.6. ՀՀ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ՌԱԶՄԻԿ ԳՈԼԵՑՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԸՄԲՇԱՄԱՐՏԻ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՀԵՐԹԱՓՈԽԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԱՅԼ ՎԱՅՐ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՐԱՏ ԳՈԼԵՑՅԱՆ/

1.7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 06-Ի N 227-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ/

1.8. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ/

1.9. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՆԳՅԱՆ (HONGYAN) ՄԱԿՆԻՇԻ ԲԵՌՆԱՏԱՐԸ «ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐԵԿԱՐԳ ԱՐՏԱՇԱՏ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԺԱՄԿԵՏ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ/

1.10. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՈՒԱՋ (UAZ) ՄԱԿՆԻՇԻ ԿԻՍԱԲԵՌՆԱՏԱՐԸ «ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐԵԿԱՐԳ ԱՐՏԱՇԱՏ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԺԱՄԿԵՏ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ/

1.11. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՄԱՋ ԿՈ (MAZ KO-806-20) ՄԱԿՆԻՇԻ ՀԱՏՈՒԿ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՄԵՔԵՆԱՆ «ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ-ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԺԱՄԿԵՏ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ/

1.12. «ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏԻ ԱՎԱԶԱԿՈՊՃԱՅԻՆ ԽԱՌՆՈՒՐԴԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ 1-ԻՆ ՏԵՂԱՄԱՍԻ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

/Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ/

1.13. «ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԱՎԱԶԱԿՈՊՃԱՅԻՆ ԽԱՌՆՈՒՐԴԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ 2-ՐԴ

ՏԵՂԱՄԱՍԻ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

/Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ/

1.14. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՏԱՁԱՏ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ 0,33 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ/

1.15. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՏԱՁԱՏ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ 0,28 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ/

1.16. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱՔՍԱԿԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 9,42370 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ/

1.17. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N 51-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

1.18. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ԳՅՈՒՂԻ ՄՈՒՐԱՅԱՆԻ ՓՈՂՈՑ 29 ՀԱՍՅԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

1.19. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ԳՅՈՒՂԻ ՄՈՒՐԱՅԱՆԻ ՓՈՂՈՑ 31 ՀԱՍՅԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

1.20. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ԳՅՈՒՂԻ ՄՈՒՐԱՅԱՆԻ ՓՈՂՈՑ 33 ՀԱՍՅԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

1.21. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ԳՅՈՒՂԻ ՄՈՒՐԱՅԱՆԻ ՓՈՂՈՑ 35 ՀԱՍՅԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

1.22. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ԳՅՈՒՂԻ ՄՈՒՐԱՑԱՆԻ ՓՈՂՈՑ 37 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

1.23. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ԳՅՈՒՂԻ ՄՈՒՐԱՑԱՆԻ ՓՈՂՈՑ 39 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

1.24. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ԳՅՈՒՂԻ ՄՈՒՐԱՑԱՆԻ ՓՈՂՈՑ 41 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

1.25. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ԳՅՈՒՂԻ Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ ՓՈՂՈՑ 28 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

1.26. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ԳՅՈՒՂԻ Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ ՓՈՂՈՑ 30 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

1.27. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ԳՅՈՒՂԻ Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ ՓՈՂՈՑ 32 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

1.28. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ԳՅՈՒՂԻ Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ ՓՈՂՈՑ 34 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

1.29. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ԳՅՈՒՂԻ Ա.

ԽԱԶԱՏՐՅԱՆ ՓՈՂՈՑ 36 ՀԱՍՅԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

1.30. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈՒՐԱՍԱՆ ԳՅՈՒՂԻ Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ ՓՈՂՈՑ 38 ՀԱՍՅԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

1.31. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ Հ. ԹՈՎԱՄԱՅԱՆ ՓՈՂՈՑ 16/1 ՀԱՍՅԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

1.32. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ՕԳՈՍՏՈՍԻ 23-Ի ՓՈՂՈՑ 79/10 ՀԱՍՅԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

1.33. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԱԼԱՐ ԳՅՈՒՂԻ ԿՈՄԻՏԱՍԻ ՓՈՂՈՑ 32/1 ՀԱՍՅԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

1.34. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՄԻՆԶԵՎ 20 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԿՐՊԱԿ ԵՎ (ԿԱՄ) ՏԱՂԱՎԱՐ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՅՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

1.35. ՔԱՐՏԵԶԱԳՐՄԱՆ ՍԽԱԼԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՅԱԾ՝ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՒՔՅԵԿՏԻ ՍԽԱԼՆ ՈՒՂՂԵԼՈՒ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

1.36. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ Ա.ԽԱԶԱՏՐՅԱՆ 116/1 ՀԱՍՅԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՈՒՄԻՑ ՍՏԱՅՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՊԻՏԱԼ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

1.37. ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԽԶՅԱՆ ԳՅՈՒՂԻ ՄԽԶՅԱՆ-ՀՈՎՏԱՇԵՆ ԽՃՈՒՂԻ 3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ (ՀՈՂԱՄԱՍԻ) ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

1.38. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ/

Կողմ -26

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱԶԱՏՅԱՆ ԱՆԻ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀԵՐՄՈՆ

ԲԱԲԱՅԱՆ ՄԱՐԻԱՄ

ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԴԵՐՄՈՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԵՓՐԵՄՅԱՆ ԱՐՄԵՆ

ԽԱԶԱՏՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԿՈՍՏԱՆՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՀԱՐ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԳԱՐԻԿ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՀՈՎԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԱՐՈ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՄԿՐՏՉՅԱՆ ԿԱՌԼԵՆ

ՆԻԿՈԼՅԱՆ ՄԱՐԻԱՄ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ՈՍԿԱՆՅԱՆ ՍՈՖԻԱ

ՍԱՀԱԿՅԱՆ ԻՇԽԱՆ

ՍԱՅԱԴՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐԱՄ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԿԱՌԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք. Արտաշատ, (0235) 20915 artashatmeria@artashat.am; artashatmeria@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՄԱՐՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ N 62-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-ին կետով, 82.1-ին հոդվածի 6-րդ մասով՝ Արտաշատ համայնքի ավագանին **որոշում է.**

- Հաստատել Արտաշատ համայնքի 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
- Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -26

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱԶԱՏՅԱՆ ԱՆԻ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀԵՐՄՈՆ

ԲԱԲԱՅԱՆ ՄԱՐԻԱՄ

ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԴԵՐՄՈՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԵՓՐԵՄՅԱՆ ԱՐՄԵՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԿՈՍՏԱՆՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՀԱԿՈՔՅԱՆ ԳՈՀԱՐ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԳԱՐԻԿ

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՀՈՎԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՏԱՎԱՋԴ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԱՐՈ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՄԿՐՏՉՅԱՆ ԿԱՌԼԵՆ

ՆԻԿՈԼՅԱՆ ՄԱՐԻԱՄ

ՇԱՀՆԱՋԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ՈՍԿԱՆՅԱՆ ՍՈՖԻԱ

ՍԱՀԱԿՅԱՆ ԻՇԽԱՆ

ՍԱՅԱԴՅԱՆ ՍՅՈՒՋԱՆՆԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐԱՄ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Արտաշատ համայնքի 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանը ներկայացնում է Արտաշատ համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական և տնտեսական ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծում և նպատակային բյուջետավորման գործընթացի իրականացում:

1.2023 թվականի ընթացքում Արտաշատի համայնքապետարանի Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգ է մուտքագրվել թվով 17.871 դիմում և գրություն տարբեր գերատեսչություններից, քաղաքացիներից և իրավաբանական անձանցից: Բոլոր գրությունները և դիմումները բավարարվել են, կազմվել են թվով 6.838 ելից գրություններ և համապատասխան իրավական ակտեր:

2023 թվականի ընթացքում Արտաշատի համայնքապետարանի աշխատակազմի կողմից տրամադրվել է թվով 3.547 տեղեկանք, իսկ 37 բնակավայրերի վարչական ղեկավարների կողմից՝ թվով 15.356 տեղեկանք:

Համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է 5.684 որոշում, արձակվել՝ 417 կարգադրություն: Աշխատակազմի քարտուղարի կողմից արձակվել է 745 հրաման:

Գումարվել է համայնքի ավագանու 15 նիստ և ընդունվել թվով 266 որոշում:

Իրականացվել են վերոնշյալ փաստաթղթերի հաշվառման և արխիվացման աշխատանքներ:

2.2023 թվականի ընթացքում համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար կայացել է 9 մրցույթ՝ 35 պաշտոնի համար:

Կայացել է 3 մրցույթ ՀՈԱԿ-ների տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար, որից երեքն էլ զբաղեցվել են:

3.Ըստ անհրաժեշտության կազմակերպվել են աշխատանքային քննարկումներ, խորհրդակցություններ և թվով 43 հանրային լուծումներ (քննարկումներ):

4.Յուրաքանչյուր շաբաթ համայնքի ղեկավարի մոտ կազմակերպվել է քաղաքացիների ընդունելություն՝ մասնակցել է թվով 522 անձ:

5.Քաղաքացիական կացության ակտերի գրանցման (ՔԿԱԳ) գործակալության Արտաշատ սպասարկման կենտրոնի կողմից 2023 թվականին կատարվել է թվով 6.245 գործարք, համայնքի բյուջե մուտքագրվել է 12.490.000 (տասներկու միլիոն չորս հարյուր ինսուն հազար) ՀՀ դրամ գումար:

2023 թվականի ընթացքում Արտաշատի համայնքապետարանի տարեկան աշխատանքային պլանով նախատեսված իրականացվել են հետևյալ աշխատանքներն՝ ըստ բնագավառների.

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

1. Օրենքով սահմանված կարգով իրականացվել են 2023 թվականի ամառային և ձմեռային զորակոչի, զորահավաքի, վարժական հավաքների կազմակերպման աշխատանքները: Համագործակցելով ՀՀ պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության (ՀՀ ՊՆ ԶևԶՀԾ) Արարատի մարզային ստորաբաժանման հետ 2023 թվականի ընթացքում կազմակերպվել է վարժական հավաքներին ներգրավված զինապարտների ծանուցման գործընթացը՝ ծանուցվել է թվով 1491 անձ: Նշված աշխատանքների արդյունքում ՀՀ ՊՆ ԶևԶՀԾ Արարատի մարզային

ստորաբաժանումը 2023 թվականի գորահավաքային առաջադրանքը և վարժական հավաքները զինապարտներով համալրման գործընթացը իրականացրել է ողջ ծավալով:

2023 թվականին ԱԻՆ և հետագայում ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության Արարատի մարզային փրկարարական վարչության հետ համագործակցելով բնակչության պաշտպանության ոլորտում կազմակերպվել և անցկացվել են մի շարք միջոցառումներ, ուսումնավարժական հավաքներ, գործնական պարապմունքներ և այլն:

2. 2023 թվականին ձեռք է բերվել ազդարարման թվով 5 շշակ, որի արդյունքում Արտաշատ համայնքի բոլոր բնակավայրերը ապահովվել են անհրաժեշտ քանակի շշակներով:

3. Մշակվել և կազմվել են «Աղետների ռիսկի կառավարման», «Քաղաքացիական պաշտպանության», «Բնակչության տարահանման» պլանները, որոնք համաձայնեցվել են ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության Արարատի փրկարարական վարչության հետ:

4. 2023 թվականին Արտաշատի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցները անցել են կրակային պատրաստության տեսական և գործնական պարապմունքներ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

1. 2023 թվականի ընթացքում Արտաշատ համայնքի բյուջեից թվով 956 սոցիալապես անապահով քաղաքացիների որպես դրամական օգնություն հատկացվել է 24.421.000 (քսանչորս միլիոն չորս հարյուր քսանմեկ հազար) ՀՀ դրամ, Երկրապահ կամավորականների միության Արտաշատի տարածքային բաժանմունքին՝ 600.000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ:

2. Արտաշատ համայնքում տեղի ունեցած մահվան ելքով ավտովթարից տուժած 6 ընտանիքներին հատկացվել է 3.000.000 (երեք միլիոն) ՀՀ դրամ դրամական օգնություն:

3. Արտաշատ համայնքում բնակվող կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 2 առաջին կարգի հաշմանդամի Արտաշատ համայնքի ավագանու որոշումներով հատկացվել է 480.000 (չորս հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ դրամական օգնություն:

4. Արցախյան ազատամարտի, քառօրյա և 44-օրյա պատերազմների, 2022 թվականի սեպտեմբերի 13-ին Ադրբեջանի կողմից սանձազերծված լայնածավալ ագրեսիայի հետևանքով զոհված և անհետ կորած զինծառայողների թվով 133 ընտանիքների համայնքի բյուջեից հատկացվել է որպես դրամական օգնություն 6.650.000 (վեց միլիոն վեց հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

5. Կատարվել է թվով 827 տնայց՝ համայնքապետարան դիմած քաղաքացիների սոցիալական վիճակի ուսումնասիրության նպատակով: Անցկացվել է սոցիալական աջակցության թվով 30 նիստ:

6. Սոցիալապես անապահով թվով 55 քաղաքացու բուժօգնություն ստանալու նպատակով տրամադրվել է պետ. պատվերի միջնորդագիր:

7. Թվով 14 սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացվել է սգո պարագաներ:

7. Խիստ կարիքավոր թվով 150 ընտանիքի հատկացվել է վառելափայտ:

8. Արտաշատ համայնքում փաստացի բնակվող արցախցի 4 կին «Մանկական զարգացման հիմնադրամ»-ի հետ համագործակցության արդյունքում անցել է մասնագիտական ուսուցում և ծրագրի ավարտին ստացել աշխատանքային գործիքներ:

9. Արտաշատ համայնքում փաստացի բնակվող ԼՂ-ից բռնի տեղահանված՝ խիստ կարիքավոր բազմազավակ, միայն կենսաթոշակառուներից բաղկացած, 1-ին խմբի հաշմանդամություն ունեցող թվով 25 ընտանիքի ֆրանսահայ բժիշկների կողմից իրականացվել է բուժ. զննում, տրամադրվել են՝ դեղամիջոցներ, հաշմանդամի թվով 3 սայլակ և շուրջ 50.000 եվրո դրամական օգնություն:

2023 թվականի սեպտեմբերի 24-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում կատարվել են հետևյալ աշխատանքները՝

1. Կատարվել է 2023 թվականին ԼՂ-ից բռնի տեղահանված և Արտաշատ համայնքում փաստացի բնակություն հաստատած անձանց տվյալների ամենօրյա հաշվառում,

էլեկտրոնային գրանցամատյանի կազմում: Նշված ժամանակահատվածում Արտաշատ համայնքում հաշվառվել է ԼՂ-ից բռնի տեղահանված թվով 6.185 անձ, ներկա պահին փաստացի բնակվում է թվով 4.683 անձ:

2. ԼՂ-ից բռնի տեղահանվածներին աջակցելու, կացարանով ապահովելու նպատակով ստեղծվել են աշխատանքային խմբեր, սահմանվել է շուրջօրյա հերթապահություն:

3. 2023 թվականին ԼՂ-ից բռնի տեղահանված, Արտաշատ համայնքում փաստացի բնակություն հաստատած անձանց որպես սոցիալական աջակցություն հատկացվել է տաք սնունդ (15 օր), չոր սննդի փաթեթներ, հագուստ, հիգիենայի և անկողնային պարագաներ, կենցաղային տեխնիկա, դեղորայք, դրամական միջոց և սուպերմարկետներից գնումներ կատարելու վաուչերներ:

4. 25.09.23 թվականին Ստեփանակերտում տեղի ունեցած պայթյունից տուժած, ԼՂ-ից բռնի տեղահանված և Արտաշատ համայնքում փաստացի բնակվող թվով 30 բազմազավակ ընտանիքների հատկացվել է կենցաղային տեխնիկա (սառնարան, հեռուստացույց, լվացքի մեքենա):

5. ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց աջակցություն տրամադրելու, կեցության և սննդի ապահովման գործընթացում ցուցաբերած ակտիվ մասնակցության համար Արտաշատի համայնքապետարանի աշխատակազմը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանի կողմից պարգևատրվել է շնորհակալագրով:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ, ՏՈՒՐԻԶՄԻ, ԱՌԵՎՏՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ԳՈՎԱԶԴԻ ԲՆԱԳԱՎԱՌ

1. 2023 թվականի ընթացքում Արտաշատ համայնքի տարածքում առևտրի սպասարկման բնագավառում գործունեություն իրականացնելու համար տրամադրվել է թվով **904 թոյլտվություն**:

- տրամադրվել է թվով **94 ծանուցագիր**.
- տնտեսավարողների հետ կնքվել է թվով **160 գովազդի պայմանագիր**,
- հասցեագրվել է թվով **8** շրջաբերական.

2. Կազմվել է թվով **51** արձանագրություն, որի արդյունքում գանձվել է **529.500** (հինգ հարյուր քսանինը հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ.

3. 2023 թվականի ընթացքում գանձվել է **52.961.800** (հիսուներկու միլիոն ինը հարյուր վաթսունմեկ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ տեղական տուրք, որից **15.070.000** (տասնհինգ միլիոն յոթանասուն հազար) ՀՀ դրամ արտաքին գովազդի համար.

4. Ֆրանսիայի Կլամար քաղաքում վերակնքվել է Կլամար-Արտաշատ քույր քաղաքների համագործակցության հուշագիրը.

5. 2023 թվականի փետրվար, հունիս և նոյեմբեր ամիսներին ընդունել ենք «Հայ մեդ» միության անդամներին, որոնք ԼՂ-ից բռնի տեղահանված 100-ից ավելի անձանց, ինչպես նաև համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների տրամադրել են դրամական օգնություն, կենցաղային պարագաներ, ինչպես նաև կատարել են բուժ. զննություն.

6. 2023 թվականի սեպտեմբերի 15-ին Արտաշատի գեղագիտական կենտրոն ՀՈԱԿ-ում ընդունել ենք ՀՀ-ում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Օլիվիե Դեկոտինիին և Ֆրանսիայի ազգային ժողովի արտաքին կապերի հանձնաժողովի նախագահ՝ Ժան Լուի Բուրլանժի գլխավորած պատվիրակությանը.

7. Համագործակցել ենք Ազնավուր հիմնադրամի և «SPFA» հայ-ֆրանսիական բարեգործական կազմակերպությունների հետ և համագործակցության արդյունքում Արտաշատ համայնքի ֆրանսախոս կամավորների մասնակցությամբ 0-24 ամսեկան երեխաներ ունեցող ԼՂ-ից բռնի տեղահանված թվով 153 ընտանիքի տրամադրվել է հումանիտար օգնություն:

ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ՀԱՄԱՏԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2023 թվականի ընթացքում Արտաշատ համայնքում շարունակվել են համայնքի բազմաբնակարան բնակելի շենքերի առանձին հանգույցների՝ տանիքների, ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցերի, մուտքերի դռների նորոգման, նոր դռների տեղադրման, աստիճանավանդակների, բազրիքների վերականգնման և վերանորոգման աշխատանքները, մասնավորապես՝ Արտաշատ համայնքի բազմաբնակարան բնակելի շենքերի մուտքերում տեղադրվել են թվով 87 նոր դուռ, վերանորոգվել և տեղադրվել է թվով 52 պատուհան և 15 դուռ, թվով 7 բազմաբնակարան բնակելի շենքերում կառուցվել են աստիճանավանդակներ, տեղադրվել են 23 մուտքերի ճաղավանդակներ, թվով 15 բազմաբնակարան բնակելի շենքերում իրականացվել են տանիքների մասնակի վերանորոգման աշխատանքներ, թվով 32 բազմաբնակարան բնակելի շենքերում վերանորոգվել են ջրահեռացման և ջրամատակարարման համակարգերը: Թվով 25 բազմաբնակարան բնակելի շենքերի նկուղներն ամբողջությամբ մաքրվել են աղբից:

2023 թվականի ընթացքում հետևողական աշխատանք է տարվել համայնքի տարածքում նոր հիմնված, վերականգնված ու վերանորոգված հանգստի գոտիների պահպանման ուղղությամբ: Տնկվել են ծառեր, թփեր և ծաղիկներ: Արտաշատ համայնքի քաղաքային լճի հատակը մաքրվել է տիղմից, տեղադրվել է նոր պոմպ, կատարվել են հարդարման աշխատանքներ:

2023 թվականին Արտաշատ քաղաքում և 37 գյուղական բնակավայրերում իրականացվել են սանմաքրման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում մաքրվել և պատշաճ տեսքի են բերվել հանրային օգտագործման տարածքները՝ այգիներն ու պուրակները, հասարակական կառույցների և ճանապարհների հարակից գոտիները, ինչպես նաև համայնքի բազմաբնակարան բնակելի շենքերի բակերը, փողոցները, համայնքի վարչական բնակավայրերի փողոցները և մուտքերը: Գործընթացին ներգրավվել են համայնքապետարանի աշխատակազմը, «Արտաշատ-կոմունալ սպասարկում», «Բարեկարգ Արտաշատ» ՀՈԱԿ-ների աշխատակիցները: Օգտագործվել է հատուկ տեխնիկա, որով կազմակերպվել է աղբի և թափոնների բարձումն ու տեղափոխումը աղբավայր: Իրականացվել են Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի թիվ 2 և թիվ 3 գերեզմանատների ճանապարհների մաքրման և հարդարման աշխատանքներ:

Երևան-Երասխ մայրուղու ասֆալտապատման աշխատանքների արդյունքում երթևեկելի ճանապարհահատվածից հեռացված շերտից (մանրահատիկ աղացած ասֆալտ) թվով 32 բեռնատար մեքենա տեղափոխվել է Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի բնակելի փողոցների հատվածներ, ինչպես նաև թվով 93 բեռնատար մեքենա Արտաշատ համայնքի 37 գյուղական բնակավայրեր: Հարթեցվել են Արտաշատ քաղաքի և 37 գյուղական բնակավայրերի փողոցները, մուտքերը, ինչպես նաև գերեզմանատուն տանող ճանապարհները:

2023 թվականի ընթացքում Արտաշատ համայնքում իրականացվել են ճանապարհային երթևեկության գծանշման աշխատանքներ:

2023 թվականին սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում ավարտին են հասցվել համայնքի թվով 12 բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների կառուցման աշխատանքները: Վերակառուցվել և ընդլայնվել է համայնքի արտաքին լուսավորության ցանցը: Համայնքի գլխավոր փողոցների լուսատուները փոխարինվել և վերազինվել են նոր LED լուսատուներով. Արտաշատ քաղաքում՝ 700, գյուղական բնակավայրերում՝ 1200 հատ:

2023 թվականի ընթացքում Արտաշատ քաղաքում ստերիլացվել է թվով 33 թափառող շուն:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ և ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

1. 2023 թվականին Արտաշատ համայնքում արտադրվել է 40447 տոննա բանջարեղեն՝ որից լոլիկ 19.954տ, բոստան՝ 2.529տ, կարտոֆիլ՝ 2.165տ, պտուղ՝ 45.552տ որից՝ կորիզավոր 40.230տ, հացահատիկ՝ 1.530տ, խաղող՝ 44.224տ, որից՝ 20.000-22.000տ մթերվել է մարզի մթերող գործարանների կողմից:

2. 2023 թվականին համայնքի՝ գյուղատնտեսական նշանակության հողերում իրականացվել է թվով 274 տեղազննություն և կազմվել հողատեսքի փոփոխության թվով 274 որոշման նախագիծ (ցածրաժեքից՝ բարձրաժեք և բարձրաժեքից՝ ցածրաժեք):

3. Արտաշատ համայնքի հողօգտագործողներին 2023 թվականի ընթացքում տրամադրվել է թվով 3.026 տեղեկանք՝ գյուղատնտեսական արտադրանք մթերող կազմակերպությունների հետ պայմանագրեր կնքելու համար:

4. Համայնքի տարածքում գյուղատնտեսական գործունեություն ծավալելու և արտավայրերից օգտվելու նպատակով կնքվել են վարձակալության թվով 15 նոր պայմանագիր, մրցութային կարգով՝ թվով 25 պայմանագիր:

5. Ընթացքի մեջ են համայնքային սեփականություն հանդիսացող հողերի չափագրման և սեփականության իրավունքների պետական գրանցման աշխատանքները:

6. 01.01.2024թ դրությամբ Արտաշատ համայնքում հաշվառված են 11.665 գլուխ խոշոր եղջերավոր կենդանի, 46.485 գլուխ՝ մանր եղջերավոր կենդանի, 4.665՝ գլուխ խոզ, 78.030՝ թև թռչուն և 3.631 փեթակ անասնազլխաքանակ:

7. Համայնքի անասնաբույժների միջոցով կազմակերպվել է անասնաբուժական ծառայությունների մատուցման բնականոն ընթացքը, ինչպես նաև կենդանիների շրջանում վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների վերաբերյալ լիազոր մարմինն է տրամադրվել տեղեկատվություն:

8. Արտաշատ քաղաքում և 37 գյուղական բնակավայրերում իրականացված կանաչապատման միջոցառումների շրջանակներում 2023 թվականի ընթացքում ձեռք են բերվել և տնկվել տարբեր տեսակի թվով 1.170 ծառ և թվով 22.070 թուփ ու ծաղիկ:

9. Արտաշատ համայնքի ընդհանուր օգտագործման կանաչապատ հատվածներում իրականացվել են ծառերի աշնանային խորը էտման աշխատանքներ:

10. Արտաշատ քաղաքում և 37 գյուղական բնակավայրերում 2023 թվականի ընթացքում իրականացվել են դաշտամիջյան ճանապարհների հարթեցման, խճապատման և բարեկարգման լայնածավալ աշխատանքներ:

11. 2023 թվականի ընթացքում Արտաշատ համայնքում իրականացվել են 35 հանրային լուսամներ՝ բնապահպանական ոլորտին առնչվող հարցերի վերաբերյալ (հանքարդյունաբերություն, կլիմայի փոփոխություն և այլն):

12. 2023 թվականի ընթացքում համայնքի 38 բնակավայրերում իրականացվել են իրազեկման աշխատանքներ փոքր և միջին խելացի անասնագոմերի կառուցման և վերակառուցման ծրագրերի վերաբերյալ, ինչպես նաև տրամադրվել են գյուղատնտեսության ոլորտի պետական օժանդակության ծրագրերի մասին համառոտ տեղեկատվություն ներառող պաստառներ:

13. 2023 թվականի ընթացքում Արտաշատ համայնքի Վարդաշեն, Արևշատ, Ոստան, Դեղձուտ, Մրգավան բնակավայրերում տեղադրվել են հակակարկտային կայաններ:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

1. 2023 թվականի ընթացքում տրամադրվել է 509 միավոր ճարտարապետահատակագծային առաջադրանք (նախագծման թույլտվություն), կառուցապատողներին տրամադրվել է 387 միավոր շինարարության թույլտվություն՝ այդ թվում սուբվենցիոն ծրագրերի իրականացման շրջանակներում, 91 միավոր ավարտական ակտ (շահագործման թույլտվությամբ) և 29 միավոր քանդման թույլտվություն:

2. Հաշվետու ժամանակահատվածում քաղաքաշինության բնագավառին վերաբերող հարցերով կայացվել է համայնքի ղեկավարի թվով 3.700 որոշում, որից թվով 1.379-ը անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին:

3. 2023 թվականի ընթացքում քաղաքաշինական նորմերին և օրենսդրության պահանջներին համապատասխան, համայնքի տարածքում իրականացվել է շինարարական աշխատանքների որակի հսկողություն: Իրականացվել են համայնքի գյուղատնտեսական նշանակության հողամասերի հաշվառման, քարտեզագրման և սահմանազատման աշխատանքներ:

4. Իրականացվել է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառում, ցամաքային տարածքի ծածկույթի ընթացիկ դասակարգում, կազմվել է համայնքի հողային հաշվեկշիռը և համայնքի հողերի կառավարման ամենամյա ծրագիրը:

5. Նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով իրականացվել է համայնքի քաղաքաշինական կադաստրի վարումը: Օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրականացվել է համայնքի բնակչությանը միջավայրի ծրագրվող քաղաքաշինական փոփոխությունների մասին իրազեկում:

6. Հաշվետու ժամանակահատվածում կանխարգելվել ու կասեցվել է ինքնակամ շինարարության 18 դեպք և օրենքով սահմանված կարգով ապահովվել է դրանց հետևանքների վերացումը: Օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացվել համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ:

7. 2023 թվականի ընթացքում կանխարգելվել և կասեցվել է ապօրինի հողօգտագործման (հողազավթման) դեպքեր: Ինքնակամ շինարարության և ապօրինի հողօգտագործման կանխարգելման ու կասեցման դեպքերի և դրանց հետևանքների վերացման վերաբերյալ կազմվել են թվով 29 արձանագրություններ, որոնց հիման վրա իրականացվել է վարչարարություն:

8. Ակտիվ աշխատանքներ են տարվել կապալառու կազմակերպությունների, շինարարության, հեղինակային և տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունների հետ:

9. 2023 թվականի ընթացքում համայնքի ավագանու հաստատմանն է ներայացվել 2024 թվականի ՀՀ համայնքների սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված Արտաշատ համայնքի սուբվենցիոն 7 ծրագրեր: Նշված ծրագրերի շրջանակներում կազմվել և լիազոր մարմին են ուղարկվել սուբվենցիոն ծրագրերի նախնական հայտերը:

10. 2023 թվականին ՀՀ համայնքների սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում Արարատի մարզի Արտաշատ համայնքն ընդգրկվել է թվով 4 սուբվենցիոն ծրագրերում:

11. 2023 թվականին մեկնարկած Արտաշատ համայնքի փողոցների նորոգման, ասֆալտապատման ու բնակավայրերի ոռոգման համակարգերի կառուցման, նորոգման շինարարական աշխատանքների զգալի մասն ընդհատվել է և տեղափոխվել 2024 թվական եղանակային անբարենպաստ պայմանների պատճառով:

1) «Արտաշատ համայնքի բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում, այդ թվում է ներգախնայող միջոցների կիրառում» ծրագրի աշխատանքները դադարեցվել են եղանակային անբարենպաստ պայմանների հետ կապված և տեղափոխվել 2024 թվական:

2) «Արտաշատ համայնքի բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում, այդ թվում է ներգախնայող միջոցների կիրառում» ծրագրի աշխատանքները դադարեցվել են եղանակային անբարենպաստ պայմանների հետ կապված և տեղափոխվել 2024 թվական:

3) «Արտաշատ համայնքի բնակավայրերի գազաֆիկացման աշխատանքներ» ծրագրի շինարարական աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել են:

4) «Արտաշատ համայնքի բնակավայրերի ոռոգման համակարգերի կառուցում (նորոգում)» ծրագրի շինարարական աշխատանքները դադարեցվել են եղանակային անբարենպաստ պայմանների հետ կապված և տեղափոխվել 2024 թվական:

5) «Արտաշատ համայնքի նախադարոցական հաստատությունների (մանկապարտեզներ), կառուցում» ծրագիրը տեղափոխվել և ընդգրկվել է 2024 թվականի ՀՀ համայնքների սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված Արտաշատ համայնքի սուբվենցիոն ծրագրում:

Ներկայացնում ենք սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում իրականացված աշխատանքների ամփոփ տեղեկատվությունը.

«Արտաշատ համայնքի բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում, այդ թվում էներգախնայող միջոցառումների կիրառում» սուբվենցիոն ծրագրերի շինարարական աշխատանքների կատարումը:

1. Դուրյան 10 - շինարարական աշխատանքները ավարտված են
2. Դուրյան 12 - շինարարական աշխատանքները ավարտված են
3. Արագի 3 - շինարարական աշխատանքները ավարտված են
4. Արագի 73 - շինարարական աշխատանքները ավարտված են
5. Իսակովի 109/1 - շինարարական աշխատանքները ավարտված են
6. Մարքսի 3 - շինարարական աշխատանքները ավարտված են
7. Շահումյան 36Ա - շինարարական աշխատանքները ավարտված են
8. Շահումյան 16 - շինարարական աշխատանքները ավարտված են
9. Մարքսի 6 - շինարարական աշխատանքները ավարտված են
10. Երևանյան 13 - շինարարական աշխատանքները ավարտված են
11. Երևանյան 11 - շինարարական աշխատանքները ավարտված են
12. Երևանյան 5 - շինարարական աշխատանքները ավարտված են

Թվարկված բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների հիմնանորոգման համար կնքվել է շինարարական աշխատանքների կատարման պայմանագիր 306.364.000 (երեք հարյուր վեց միլիոն երեք հարյուր վաթսուներկու հազար) ՀՀ դրամի: Աշխատանքներն ամբողջությամբ ավարտված են և գտնվում են ավարտական փաստաթղթերի ձևակերպման փուլում:

ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի բնակավայրերի փողոցների նորոգում, ասֆալտապատում

1. գ.Վարդաշեն -508գծմ - շինարարական աշխատանքները ավարտված են
2. գ.Մրգանուշ - 598գծմ - շինարարական աշխատանքները ավարտված են
3. գ.Մասիս - 700գծմ - շինարարական աշխատանքները ավարտված են

Վերը նշված 3 բնակավայրերի փողոցների ասֆալտապատման աշխատանքների կատարման համար կնքվել է շինարարական աշխատանքների կատարման պայմանագիր՝ 295.839.799 (երկու հարյուր իննսունհինգ միլիոն ութ հարյուր երեսունինը հազար յոթ հարյուր իննսունինը) ՀՀ դրամի, որն իր մեջ ընդգրկում է նաև Ազատական և Զրաշեն բնակավայրերը: Բնակավայրերի փողոցների ասֆալտապատման մյուս ծրագրերը տեղափոխվել են 2024 թվական:

ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի բնակավայրերի ոռոգման համակարգի կառուցում, նորոգում

1. գ.Մխչյան խորքային հոր - շինարարական աշխատանքները ավարտված են
2. գ.Մրգավետ - 2,1 կմ - շինարարական աշխատանքները ավարտված են
3. գ.Լանջազատ - 2,261 կմ - շինարարական աշխատանքները ավարտված են

Վերը նշված 3 բնակավայրերում ոռոգման համակարգի կառուցման համար կնքվել է շինարարական աշխատանքների 190.591.326 (մեկ հարյուր իննսուն միլիոն հինգ հարյուր

իննսունմեկ հազար երեք հարյուր քսանվեց) ՀՀ դրամի պայմանագիր: Ոռոգման համակարգի կառուցման աշխատանքների մյուս ծրագրերը ևս տեղափոխվել են 2024 թվական:

ՀՀ Արարատի մարզի բնակավայրերի գազաֆիկացման աշխատանքներ

1. գ. Բարձրաշեն - 1500գծմ - ավարտված է
2. գ. Դեղձուտ - 500գծմ- ավարտված է
3. գ. Աբովյան - 120գծմ- ավարտված է
4. գ. Մրգավան - 700գծմ- ավարտված է
5. գ. Դիտակ - 500գծմ - ավարտված է
6. գ. Մխչյան - 100գծմ - ավարտված է
7. գ. Մրգանուշ - 550գծմ - ավարտված է
8. գ. Դիմիտրով - 865գծմ - ավարտված է
9. գ. Մրգավետ - 1240գծմ - ավարտված է
10. գ. Քաղցրաշեն - 226 գծմ - ավարտված է
11. գ. Ոստան - 200գծմ - ավարտված է
12. գ. Դվին - 400գծմ - ավարտված է
13. գ. Արաքսավան - 600գծմ - ավարտված է
14. գ. Այգեգարդ - 300գծմ - ավարտված է

ԸՆԴԱՄԵՆԸ - 8701 գծմ

Նշված բնակավայրերի գազաֆիկացման աշխատանքների կատարման համար կնքվել է 87.204.000 (ութսունյոթ միլիոն երկու հարյուր չորս հազար) ՀՀ դրամի շինարարական աշխատանքների կատարման պայմանագիր:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

1. 2023 թվականի ընթացքում իրականացվել է համայնքապետարանի ենթակայությամբ գործող կազմակերպությունների (ՀՈԱԿ-ներ) սննդամթերքի, գրենական, տնտեսական, հատուկ նպատակային նյութերի, վարչական սարքավորումների, ուսումնադիդակտիկ պարագաների ձեռքբերման թվով **300** գնման ընթացակարգ:

2. Արտաշատ համայնքի ամանորյա զարդարման, ամանորյա նվերների ձեռքբերման, աղբահանության, Արարատյան 3 և 5 բազմաբնակարան բնակելի շենքերի բակերի ասֆալտապատման, տեխնիկական և հեղինակային հսկողության, գազի կաթսայի ձեռքբերման, գծանշման ծառայության, գույքագրման և դեռատիզացիայի ծառայությունների, ծառերի, հակակարկտային կայանների և կայանների լիցքավորման ծառայությունների, շչակների, սգո ծառայությունների, համայնքապետարանի վարչական շենքի վերանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների, աղբամանների և նստարանների, ավտոմեքենայի, գրենական, տնտեսական, դրոշների, վարչական շենքի երեսպատման, լույսերի, համակարգիչների, սքաների, ամանորյա լույսերի, ամանորյա տոնական միջոցառման, աղբահանության ծրագրի, ամանորյա արձանների, համերգային ծրագրի, մեքենայի տեխ. սպասարկման, մասնագիտական վերապատրաստման, համազգեստի, հյուրասիրության, հատուկ նպատակային նյութերի, շաբաթաթերթի, շների վնասագերծման, սայիկապատման, տեսախցիկների, փոստային ծառայությունների, նախագծային փաստաթղթերի փորձաքննության ծառայությունների ձեռքբերման թվով **40** գնման ընթացակարգ:

3. Սուբվենցիոն ծրագրերի կատարման նպատակով իրականացվել է նախագծա-նախահաշվային փաստաթղթերի, շենքի տեխնիկական վիճակի հետազննության, շինարարական աշխատանքների, որակի տեխնիկական հսկողության, հեղինակային հսկողության, նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության թվով **21** գնման ընթացակարգ:

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ, ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՊՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

1. 2023 թվականի ընթացքում համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններում սահմանված կարգով հայտարարվել է թվով 136 մրցույթ՝ մանկավարժի թափուր հաստիքների համալրման նպատակով:

2. Օրենքով սահմանված կարգով կազմակերպվել և անցկացվել են համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների պարտադիր վերապատրաստման դասընթացներ, ինչի արդյունքում հավաստագրեր են ստացել 26 դաստիարակ:

3. Տեղական վճարների գծով արտոնություններ են սահմանվել համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններ, երաժշտական և արվեստի դպրոցներ հաճախող թվով 404 երեխայի, այդ թվում 100% նվազեցման արտոնությունից օգտվել է թվով 142 երեխա, իսկ 50% նվազեցման արտոնությունից՝ 262 երեխա: Համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի հուլիսի 15-ի 1169-Ն որոշման՝ համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններ հաճախող թվով 434 երեխայի համար կիրառվել է 100% չափով նվազեցման արտոնություն:

4. Աթլետիկայի Հայաստանի առաջնությանը, Ազատ ոճի ըմբշամարտի Եվրոպայի մեծահասակների առաջնությանը, Ազատ ոճի ըմբշամարտի աշխարհի առաջնությանը Արտաշատ համայնքի մարզիկներին ցուցաբերած նվաճումների համար հատկացվել է դրամական միջոց ընդամենը՝ 2.240.000 (երկու միլիոն երկու հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամի չափով, իսկ նրանց մարզիչներին՝ 1.100.000 (մեկ միլիոն հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

Համահայկական ամառային ութերորդ խաղերին համայնքը ներկայացրել է Արտաշատի պատվիրակությունը՝ համայնքապետարանի ներկայացուցիչների և մարզիկների մասնակցությամբ: Խաղերի Աթլետիկայի մրցումներն անցկացվել են Արտաշատի մարզադաշտում, Արտաշատի թիմը աթլետիկայի մրցումներում 22 մեդալ է նվաճել (9 ոսկե, 6 արծաթե և 7 բրոնզե):

Համահայկական ամառային ութերորդ խաղերի մրցանակակիր մարզիկներին և մարզիչներին տրամադրվել է դրամական խրախուսում 1.080.000 (մեկ միլիոն ութսուն հազար) ՀՀ դրամի չափով:

Աշխարհի, Եվրոպայի, այլ միջազգային առաջնություններում և հանրապետական առաջնություններում՝ «Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի Ռ. Գոլեցյանի անվան ըմբշամարտի օլիմպիական հերթափոխի մանկապատանեկան մարզադպրոց», «Արտաշատ քաղաքի մանկապատանեկան համալիր մարզադպրոց» և «Արտաշատ համայնքի Լանջազատ գյուղի Ռոբերտ Հակոբջանյանի անվան մարզադպրոց» ՀՈԱԿ-ների սաների ցուցաբերած նվաճումների համար 37 մարզիկի և 20 մարզչի հատկացվել է անհատույց դրամական միջոց 5.940.000 (հինգ միլիոն ինը հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամի չափով:

Լավագույն աշխատանքի համար մարզիչ Ռաֆիկ Գոլեցյանին ամսական լրավճար է սահմանվել 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամի չափով:

Արտաշատի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 85 սանի երաժշտության, արվեստի և շախմատի բնագավառում ցուցաբերած նվաճումների համար և 43 ուսուցչի հատկացվել է միանվագ անհատույց դրամական միջոց 2.720.000 (երկու միլիոն յոթ հարյուր քսան հազար) ՀՀ դրամի չափով:

Արտաշատ համայնքի Արտաշատի ավագ դպրոցի և Արտաշատ համայնքի գյուղական 32 բնակավայրերի միջնակարգ դպրոցների 12-րդ դասարանի շրջանավարտներին տրամադրվել է դրամական խրախուսում 1.950.000 (մեկ միլիոն ինը հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամի չափով:

«Արտաշատի Ամո Խարազյանի անվան դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ-ի դերասան, Հայաստանի Հանրապետության վաստակավոր արտիստ Գագիկ Սարգսյանի աշխատանքային գործունեության 55-ամյակի առթիվ տրամադրվել է միանվագ դրամական խրախուսում 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամի չափով:

5. Հաշվետու ժամանակահատվածում համայնքում կազմակերպվել և անցկացվել են Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի, Հայ եկեղեցական և ավանդական տոների հետ կապված մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝

- Հայոց բանակի կազմավորման 31-ամյակին նվիրված համերգ «Բոհեմ» խմբի մասնակցությամբ:
- Տեառնընդառաջի և Բուն Բարեկենդանի տոներին նվիրված միջոցառումներ:
- Կանանց միջազգային օրվան և Թատրոնի միջազգային օրվան նվիրված միջոցառումներ:
- Արտաշատ-Կլամար քույր-քաղաքների բարեկամության 20-ամյակին նվիրված հոբելյանական երեկոն անցկացվել է «Արտաշատի Ամո Խարազյանի անվան պետական դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ-ում, որին ներկա էր նաև Կլամարից Հայաստան ժամանած պատվիրակությունը:
- Ապրիլի 24-ին Արտաշատի Սուրբ Հովհաննես Ավետարանիչ եկեղեցում անցկացվել է արարողակարգ նվիրված Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին, ինչպես նաև արվեստի և գեղարվեստի դպրոցների սաների գեղանկարների և ձեռքի աշխատանքների թեմատիկ ցուցահանդես:
- Քաղաքացու օրվա առթիվ Կլամարի անվան պուրակում հանդիպում են ունեցել համայնքի ակտիվ երիտասարդների հետ: Հանդիպումը կրում էր «Համայնքն իմ աչքերով» խորագիրը:
- Մայիսի 9-ին նշվել է Հայրենական պատերազմի հաղթանակի 78-ամյակը:
- Մայիսի 22-ին՝ «Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի Շ. Ազնավուրի անվան մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ում նշվել է Շ. Ազնավուրի ծննդյան 99-ամյակը:
- Հայաստանի Առաջին Հանրապետության անկախության հռչակման 105-ամյակին նվիրված համերգն անցկացվել է Արտաշատ համայնքի Լանջազատ գյուղում գտնվող Ազատի ջրամբարի տարածքում:
- Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվան նվիրված միջոցառում է կազմակերպվել համայնքապետարանի հարակից հրապարակում:
- Հիսուս Քրիստոսի պայծառակերպության՝ Վարդավառի տոնակատարության առթիվ համայնքի երեք՝ Շահումյան, Մխչյան և Մրգանուշ բնակավայրերում կազմակերպվել են միջոցառումներ՝ ուրախ խաղերով, հարիսայի հյուրասիրությամբ և փրփուր փարթիներով:
- Երիտասարդության միջազգային օրվան նվիրված միջոցառումը մեկնարկել է տոնական քայլերթով, ավարտվել պարային կատարումներով և համերգային ծրագրով:
- Դեկտեմբերի 29-ին կազմակերպվել և անցկացվել է Ամանորին նվիրված տոնական մեծ միջոցառում՝ համերգ և շքեղ հրավառություն:

ԻՐԱՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2023 թվականի ընթացքում Արտաշատի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի կողմից իրականացված վարչարարության արդյունքում՝

1. Թվով 68 արձանագրված վարչական իրավախախտումների գործերով հարուցվել են վարչական վարույթներ, կազմակերպվել են լսումներ, կազմվել են որոշման նախագծեր:
2. Վարչական իրավախախտումների գործերով նշանակված վարչական տույժերի շրջանակներում համայնքի բյուջե է գանձվել 1.758.053 (մեկ միլիոն յոթ հարյուր հիսունութ հազար հիսուներեք) ՀՀ դրամ:
3. Իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից համայնքի նկատմամբ ունեցած հարկային պարտավորությունների շրջանակներում կազմվել են թվով 709 որոշման նախագիծ:

4. Վարչարարության արդյունքում (վարչական ակտեր, ժամանակացույց, հարկադիր կատարում) իրավաբանական և ֆիզիկական անձանցից համայնքի բյուջե է գանձվել շուրջ 80.085.648 (ութսուն միլիոն ութսունհինգ հազար վեց հարյուր քառասունութ) ՀՀ դրամ:

5. Իրավաբանական բաժնի աշխատակիցները մասնակցել են թվով 38 դատական նիստերի՝ վարչական և քաղաքացիական գործերով: Դրանց շրջանակում կազմվել և ներկայացվել են հայցադիմումի պատասխաններ, միջնորդություններ, դիրքորոշումներ:

ԵԿԱՄՈՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

1. 2023 թվականի ընթացքում Արտաշատ համայնքի բնակիչ հանդիցացող, հողի հարկի, գույքահարկի, անշարժ գույքի, աղբահանության վճարների, ինչպես նաև վարձավճարների գծով խոշոր հարկային պարտավորություններ ունեցող թվով 556 ֆիզիկական և իրավաբանական անձանց ծանուցվել է իրենց պարտավորությունների մասին, արդյունքում մի մասի հետ կնքվել է ժամանակացույց վճարների վերաբերյալ:

2. Իրականացվել է հողի հարկի, գույքահարկի և անշարժ գույքի, աղբահանության վճարների անդորրագրերի մուտքագրում համակարգ, ինչպես նաև «Վեկտոր պլուս» և 2021 թվականին ներմուծված «E-community» ծրագրերով թվով 3.467 գույքի համադրում:

3. Արտաշատ համայնքի գյուղական բնակավայրերում իրականացվել են բնակիչների և տնտեսավարող սուբյեկտների հետ աղբահանության վճարովի ծառայության պայմանագրերի կնքման աշխատանքներ թվով 205 տնտեսավարող սուբյեկտների և թվով 540 ֆիզիկական անձանց:

4. Անշարժ գույքի բազայում տեղ գտած անճշտությունների կապակցությամբ կազմվել և ուղղումներ կատարելու համար «E-community» ծրագրի գրասենյակ է ներկայացվել թվով 265 հայտ:

5. Միասնական բազա կազմելու նպատակով կազմվել և «Փուշ ընդ փուլ» ՍՊԸ-ին է ներկայացվել ընդհանուր տեղեկատվություն գյուղական բնակավայրերի ֆիզիկական և իրավաբանական անձանց ճշտված ապառքների, հասցեների, շնչերի կամ մակերեսների վերաբերյալ:

6. 2023 թվականի ընթացքում վերակնքվել է 31 միավոր 1.869,9 հա մակերեսով, 2.177.700 (երկու միլիոն հարյուր յոթանասունյոթ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ գուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության պայմանագրեր:

8. 2023 թվականի ընթացքում Արտաշատ համայնքում կատարված հավաքագրումների տարեկան կատարողականը (2022 թվականի տարեկան կատարողականի հետ համեմատական).

Հարկերի տեսակները	Տարեկան կատարողական 2022թ.	Տարեկան կատարողական 2023թ.	Տարեկան պլան 2023թ.
1. Հողի հարկ	71230122	100003471	80760000
Իրավաբանական անձ	1150863	1653287	2360000
Ֆիզիկական անձ	70079259	98350184	78400000
2. Գույքահարկ	626941335	792623286	752644000
Իրավ.անձ շինություն	5789289	5360929	20224000
Ֆիզ.անձ շինություն	13885650	21002270	24820000
Իրավ.անձ փոխադրամիջոց	20022165	19172044	16500000
Ֆիզ.անձ փոխադրամիջոց	587244231	747088043	691100000
3. Անշարժ գույք	221276575	315150372	332700000
Իրավաբանական անձ	33710256	63000272	45000000

Ֆիզիկական անձ	187566319	252150100	287700000
4. Վարձավճարներ	53811827	78742370	67200000
Հողի վարձ	35288172	43689858	43377800
Գույքի վարձ	18523655	35052512	23822200
5. Աղբահանության վճար	114299439	164423226	147000000
Ընդամենը	1087559298	1450942725	1380304000

Տարեկան կատարողականը կազմում է 105,6%, նախորդ տարվա համեմատությամբ ավելի է հավաքագրվել մոտ 370.000.000 (երեք հարյուր յոթանասուն միլիոն) ՀՀ դրամ:

ՖԻՆԱՆՍԱՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2023 թվականի բյուջեի ընդամենը եկամուտները տարեկան կտրվածքով հաստատվել է 6 865 594 900 դրամ: 2023 թվականի ընթացքում փաստացի մուտքագրվել է 6.970.336.978 դրամ՝ կատարողականը 101,5%, այդ թվում՝

Գույքային հարկեր անշարժ գույքից

- գույքային հարկեր անշարժ գույքից եկամտային հաշվին փաստացի մուտք է եղել 445.900.970 ՀՀ դրամ, պլանավորված 458 504 000 դրամի դիմաց (կատարողականը 97%), որից՝

- հողի հարկ՝ 99.652.159 ՀՀ դրամ, պլանավորված 80.760.000 ՀՀ դրամի դիմաց (կատարողականը 123%).

- գույքահարկ շենք շինությունների 32.044.751 ՀՀ դրամ, պլանավորված 45.044.000 ՀՀ դրամի դիմաց (կատարողականը 71%).

- անշարժ գույքի հարկ 314.204.060 ՀՀ դրամ, պլանավորված 332.700.000 ՀՀ դրամի դիմաց (կատարողականը 94%).

- գույքային հարկեր այլ գույքից՝ փոխադրամիջոցներից 758.233.478 ՀՀ դրամ, պլանավորված 707.600.000 ՀՀ հազար դրամի դիմաց (կատարողականը 107%):

Տեղական տուրքեր

Տեղական տուրքերի հաշվին մուտքագրվել է 62.822.864 ՀՀ դրամ, պլանավորված 42.134.400 ՀՀ դրամի դիմաց (կատարողականը 149%) կամ տվյալ հարկատեսակի գծով բյուջե հավելյալ մուտք է եղել 20.688.464 ՀՀ դրամ:

Պետական տուրքեր

Պետական տուրքերի հաշվին փաստացի մուտք է եղել՝ 35.600.500 ՀՀ դրամ, պլանավորված 24.000.000 ՀՀ դրամի դիմաց (կատարողականը 148%) կամ տվյալ հարկատեսակի գծով բյուջե հավելյալ մուտք է եղել 11.600.500 ՀՀ դրամ:

Պաշտոնական դրամաշնորհներ

Պաշտոնական դրամաշնորհների մասով փաստացի մուտք է եղել 5.007.964.062 ՀՀ դրամ, որից՝ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաներ 3.256.027.000 ՀՀ դրամ, ընթացիկ դրամաշնորհներ 67.406.600 ՀՀ դրամ, պետական բյուջեից տրվող նպատակային հատկացումներ 5.882.900 ՀՀ դրամ, կապիտալ դրամաշնորհներ (սուբվենցիա) 1.678.647.562 ՀՀ դրամ:

Այլ եկամուտներ

Այլ եկամուտների գծով բյուջե մուտք է եղել 659.815.103 ՀՀ դրամ, պլանավորված 583.588.000 ՀՀ դրամի դիմաց (կատարողականը 113%), այդ թվում մուտքեր գույքի վարձակալությունից կազմել է 84.733.370 ՀՀ դրամ, պլանավորված 67.200.000 ՀՀ դրամի դիմաց (կատարողականը 126%), մուտքեր ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից 70.025.196 ՀՀ դրամ, վարչական գանձումների մասով մուտք է եղել 482.479.211 ՀՀ դրամ, որից աղբահանության վճարի մասով 164.442.846 ՀՀ

դրամ, պլանավորված 147.000.000 դրամի դիմաց (կատարողականը 112%), համայնքային ենթակայության նախադպրոցական և արտադպրոցական կազմակերպությունների ծառայություններից օգտվողների վճարների մասով փաստացի մուտք է եղել 242.947.553 ՀՀ դրամ, պլանավորված 287.591.000 ՀՀ դրամի դիմաց (կատարողականը 84%), ինքնական կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարների մասով մուտք է եղել 41.499.469 ՀՀ դրամ, պլանավորված 11.000.000 ՀՀ դրամի դիմաց (կատարողականը 377%):

Առ 01.01.2024 թվականի դրությամբ Արտաշատ համայնքի բյուջեի վարչական մասի եկամուտները փաստացի կազմել է 5.291.689.416 ՀՀ դրամ կամ տարեկան պլանավորված 5.085.594.900 ՀՀ դրամի 104%-ը: **Առ 01.01.2023** թվականի դրությամբ համայնքի բյուջեի վարչական մասի եկամուտները փաստացի կազմել է 3.363.239.694 ՀՀ դրամ կամ տարեկան պլանավորված 3.564.314.234 ՀՀ դրամի 94%-ը: Աճը 2022 թվականի համեմատ կազմում է 1.928.449.722 ՀՀ դրամ (57.34%):

Առ 01.01.2024 թվականի դրությամբ Արտաշատ համայնքի բյուջեի սեփական եկամուտների գծով փաստացի մուտքագրվել է 1.956.516.498 ՀՀ դրամ կամ տարեկան պլանավորված 1.809.829.400 ՀՀ դրամի 108%-ը: **Առ 01.01.2023** թվականի դրությամբ համայնքի բյուջեի սեփական եկամուտների գծով փաստացի մուտքագրվել է 1.417.549.291 ՀՀ դրամ կամ տարեկան պլանավորված 1.619.443.534 ՀՀ դրամի 88%-ը: Փաստացի աճը 2022 թվականի համեմատ կազմում է 538.967.207 ՀՀ դրամ (38%):

Համայնքի 2023 թվականի բյուջեի ծախսերը կազմել է 6.237.685.260 ՀՀ դրամ, որից ըստ գործառական դասակարգման՝

- **Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ** – 1.159.236.759 ՀՀ դրամ, որը կազմում է բյուջեի փաստացի ծախսերի 18.58 % -ը, այդ թվում
 - վարչական մասով 1.106.627.047 ՀՀ դրամ
 - ֆոնդային մասով 52.609.711 ՀՀ դրամ
- **Տնտեսական հարաբերությունների գծով** - 2.261.343.887 ՀՀ դրամ, որը կազմում է բյուջեի փաստացի ծախսերի 36.25 %-ը, այդ թվում
 - վարչական մասով 25 274 192 դրամ
